ների ոտնկոխ արած երկիրները, ափերի մօտ ոռնող ռազմանաւերը: Ու մեր եւ նրա միջեւ՝ բարոյական հսկայ անդունդը, անհաւատալի փլուզումների կուտակումները, արիւնի գետերը ցեխ դարձած, եւ ցեխերի բլուրների դիակների վրայ կուտակուած:

Պէտք է արիւաբար խմել բաժակը մինչեւ տակը: Հայ լինելը հեշտ չէ: Ո՞վ է իմանում, նախախնամութեան ձեռքի մէջ ինչպիսի գաղտնի զէնք ենք եւ մոլորակի վրայ ինչպիսի ըստուերներ ենք կոչուած լուսաւորելու:

Դարը սոսկալի պտուտակի նման պատռում է տարածութիւնները, Անկայմ, անդեկ նաւի վրայից դիտում ենք փուլ եկած հորիզոնը:

Գնում ենք՝ վշտերի տակ փոշիացած ճանապարհներով, եւ ոչ ոք մեզ չի սպասում:

* * *

Ցոյները պարտւում են:

Հայերը, Զամլճայի կատարից, վախով լեցուն նայուածքով չօշափում են անհանգիստ Ասիայի հողերը:

Տաճիկների թաղերում գաղտնի ժողովներ են տեղի ունենում:

Գալաթիայի նորաչէն տուների ամենաբարձր յարկում Խորհրդային Հայաստանը առեւտրական դրասենեակ է բաց արել:

Հայ ոգին, այրուող գաւառներից փախած կիսամեռ գաղթականներին, խաւարի եւ մազութի գներն է հաղորդում:

Արարատը տնկուել է աճառի գործարանի ռեկլամի վրայ եւ Նոյեան Տապանը մարքսիստական գրականութիւն է փոխադրում:

Թաքսիմի սրճարաններում վայր ընկնող կասկածելի մարդիկ, յանկարծ արթնցած դոլարների տարածուող հոտից, վիստում են դրասեղանների շուրջը, մահամերձ մի աշխարհի վերջին հառաչանքները առաջարկելով:

Մի մարդ, անյաջող դերասանի ոլորկ դէմքով, իր տակից խուսափող աթոռի ծայրից պինդ բռնած, կարեւորութիւն է ծախում եւ սրտի տակ, վախը, դղումի նման աճեցնում:

Մեծ վաճառատան գաւառում բացուած մասնաճիւղի է նմանում այս դրասենեակը: Անորոշ մի վտանգից վախեցող մարդկանց պէս, շտապ ամէն բան ծախում են:

Աշխարհիս երկրաշարժական ցնցումները գրելու ձեռքենայի ստեղների տակ սատանայական հաշիւ են վերածուել. ահաւոր հրդեհներ, նախճիրներ, մոլորակը քանդող զարհուրանքներ, ժողովրդներ ոչնչացնող աւերներ առեւտրական կանոնաւոր գրքերում «ելք եւ մուտքի» դասաւորուած էջ են բաց արել:

Սահմանները օձերի պէս պարում են. քաղաքները փոշի են դառնում: Երկրագնդի առանցքը խենդացած պտտում է պարապի մէջ, ժողովրդները փախչում են, ծովերը ոռնում:

Իսկ այստեղ ամէն ինչ մանր թուաբանութեան են վերածել:

Ամերիկեան դրասեղանի վրայ, կասկածելի այցետոմսի մօտ, Էնդէլսի գլուխը կօշիկի ներկ է ծախում, մինչ Գում Գափուի պատրիարքը՝ ասորական քիթը մօրուքի վրայ կախած՝ ազգի դունչը ծռել է մալականների չինած մի կոր պանիրի առջեւ:

Հեռագրաթելերը, առեւտրական պարզ խօսքերի տակ, դաւում են պետութիւնների դէմ եւ մզկիթների մէջ դանակներ սրում:

Պերան դիտում է եւ նախանձում:

* * *

Ամէն օր, չարագուշակ լուրեր են գալիս:

Ցոյները նահանջում են: Քրիստոնեայ ազգաբնակչութիւնը, այրուած գիւղերի մոխիրների վրայ, դէն նետուած դրօշակները կոխկռտելով, փախչում է ծովեզերք, որտեղից ոչ մի նաւ չի անցնում:

Թրակիան վիզը ծռել, կախաղանի է սպասում:

Իզմիրը, միջնադարեան դիւցազներգութեան վերջին տեսարանն է ապրում: Իր ամբողջ հարստութիւնով այրւում, անշարժօրէն կեցած եւրոպական ռազմանաւերի առջեւ: Թնդանօթների տեղ, լուսանկարչական գործիքների ճաթճատումն է լսւում:

Քրիստոնեաները կուում են եկեղեցիների շուրջ: Զանգակատները բոցերի մէջ վայր են ընկնում եւ խոր հառաչանքներ ձգում Փարիզի եւ Լոնտոնի ռադիո-կայանների լռութեան առջեւ:

Թուրք զօրքերը թալանում են Եւրոպայի պատիւը:

Ասիան կատաղած վիշապի պէս գլուխը երկարում է դէպի Պոլիս եւ ակռաները մխրճում անգլիացի հրամանատարի շքանշանների մէջ:

Դաշնակիցները քաղաքը պիտի թողնեն:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան